

853): Յուզակազիրը հաշուած է «71 Հարց-մունք եւ պատասխանիք են, մերթ ընդար-ձակ եւ մերթ հակիրճ»:

Վահրամ Բարունի Կիլիկիցի ծաղկած է ԺԳ. դարու վերջին քառորդին. վախճանած է 1293էն ետքը:

Գրութեանս ընթացքին առիթ եղաւ յի-շելու, թէ եղած են ոմանք, որոնք ձախորդ կարծիքն ունեցած են, թէ Եղիշէ թարգմա-նիչն եղած ըլլայ Մակարայեցոց գրքերու եւ Ս. Գրոց այլեւայլ մասերու¹. Վասն զի գամ են լեզուի նմանութիւններ ասոնց եւ Եղիշէի մէջ: Գծրախտարար անոնք աչք եւ ականջ գոցած են այն աղաղակող աննմանու-թիւններու, որոնք սարերով եւ ձորերով կը հեռացնեն Եղիշէն այդ գրութեանը լե-զուէն եւ ոճէն: Եղիշէ կարգացած է Ս. Գիրքը եւ օգտուած է անոնցմէ ամէն կերպ. բայց իր կրած ազդեցութիւնը այդ գրութիւններէն թոյլ չի կրնար տալ հետեւեցնելու, թէ ինքը եղած ըլլայ անոնց թարգմանիչը: Չարժէր այս հարցի քով աւելի երկար կանգ առնել:

Եղիշէ իր հարուստ մատենագրական վաստակներով կարեւոր տեղ կը գրաւէ է. դարու գրականութեան մէջ: Եւ եթէ իր մահը 650էն ոչ շատ վերջը տեղի ունեցած է, ժամանակն է ասելու անոր մահուան 1300ամեակը եւ այս առիթով հրատարակ հա-նելու անոր երկասիրութիւններու լրակատար եւ քննական հրատարակութիւնը:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԵՓՐԵՏԻ ՍԵՉՄԵՆԵ ԳԼՈՒԹԵՐ ՊՈՄՓԵՌՈՍԻ ԹԵՄԵՆԵԿԻՆ ՄԻՆՉԵՒ ԵՐԵՐԵՅԻՈՑ ԸԹՅԵՐՀԿԵԼՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն):

§ 3. Սատարք՝ Բեւե և վաշտք:

Լեզոնը յարմար էր ամէն արշաւանքի-բայց պատերազմի ոսոխին համեմատ՝ պա-հետի Սատարներէն (auxilia) կ'առնուէին այս կամ այն տեսակ մարտիկներ, զոր լե-զոնը չունէր: Իրօք ալ այս Սատարող գնդերը յաճախ՝ հոսմէացի պետի մը ներ-քեւ՝ կը պահէին իրենց աւանդական դէն-քերը եւ յատուկ մարտագիտութիւն մը: Այս մասին լոյս մը կը սփռեն այլեւայլ պատկե-րաքանդակ յիշատակարաններ, որոնք սա-կայն ցանցաւ են, իսկ Արեւելքի նկատմամբ՝ ասոնցմէ հատ մը միայն կրնամ յիշատակել:

Աթէնքի թանգարանին մէկ կոթողը¹⁶¹, որ Սպարտա գտնուած է, կը ներկայացնէ կանգուն կեցած մարդ մը՝ որ անտարակոյս սատարական վաշտի մը կը վերաբերէր¹⁶²: Հագած է շերտաւոր գրահ, որ կիսով ծած-կուած է վերարկուի մը ներքեւ, պարեգօտ մը, կիսակոշիկներ եւ իրբեւ գլխու ծած-կոյթ՝ թաղի մը: Չինուած է ձուածեւ վա-հանով մը, ուղղորդ սուսերով մ'երկայն երա-խակալով որ երկու ձեռքով կրնայ բռնուիլ, եւ կարճ լախտով մը՝ որ յիշատակարանիս ամէնէն նշանաւոր մանրամասնութիւնն է¹⁶³:

¹⁶¹ P. Wolters, Ein Denkmal der Partherkriege (Athen. Mitth. XXVIII, 1903, p. 291—300. (Տմտ. Lebas-Foucart, II, 203 b).

¹⁶² Արձանագրութիւն նոյնը չի բեր. Μάρκος Αὐδούλιος Ἀλέξιος Θεώνος στρατιευσάμενος κατὰ Περ-σῶν ἐτη βιόσασε λ'. (Մարկոս Արեղիոս Ալեքսիս Թէո-նոսի գինուորեալ ընդդէմ Պարսից կեցեալ ամս Լ.) բայց լեզոնական ըլլալը յիշուած կ'ըլլար՝ եթէ այն հանգամանքն ունենար: Իր եռանունութիւնը (tria nomina) արդէլք մը չէր՝ լեզոնէ մը գուրս ծա-սոցած ըլլալու. բայց աստի քաղաքացոյ իրաւունքը շատ տարածուած էր Գ. դարու սկիզբը, որ ժամա-նակէն է յիշատակարանը, եւ կ'երեւայ թէ ասոջին անգամ Կարակալա Արսիոյ մէջ գինուորակոչ ըրու-պարթեւական պատերազմին համար. «Սպարտայէն բե-րի տարով կոշից երիտասարդ Լակոնական եւ Պրատա-նտեան խումբը (γεαρίαις Λακωνικόν και Πιτανάτην λό-χον ἐξάλει) կը գրէ Հերոդեան (Գ, 8, 3):

¹⁶³ Wolters իրաւամբ մասնանիչ կ'ընէ լախտի գործածութիւնը Արկադիացոց քով (Ստատ., Թերայ, Գ, 301) որոնցմէ նոյնը փոխ առած ըլլալու էր լակե-դեմոնական գունդը (λόχος). Համեմատներ ուրիշ օրինակ մ'ալ. Արեղիանու բանակին մէջ Պարթեանի գնդերը գինուած էին՝ բայց ի ուրիշ գէնքերէ, ինչպէս Չոսիթոս կ'ըսէ, նաեւ մահակով ու բրով (χοστίνաս και ὀπάλα) ասոնց հարուածներուն ներքեւ Պալ-միրացիք կ'ընդարձանային ու կ'անդամալուծուէին (Ա. 53, 2—3): Հմտ. Պարսից լախտերը՝ վերը ԳԼ. Բ.:

¹ Արարատ, 1896, էջ 555 եւ 1897, էջ 212:

Գծրախտարար ասի քիչ մը բացառիկ տիպար մըն է մարտիկի մը. աննշան եղած ըլլալու էին բուն Յունաստանէ զօրահան եղած զի-նուորները¹⁶⁴:

Սատարաց գլխուն մէջ ժամանակագրա-կան որեւէ բաժանում անհրաժեշտ հարկա-ւոր չ'երեւար: Մարտական այս միութիւն-ներն՝ որեւէ ուրիշ միութենէ մ'աւելի՝ գերծ-մնացած կ'երեւան այլափոխութենէ՝ իրենց սկզբէն սկսեալ մինչեւ վերջը, որ ամէնէն կանուխ Ե. դարուն է. որովհետեւ «Տեղեկ-Աստիճ.» դրոց մէջ թեւեր ու վաշտեր կը վիտան միեւնոյն անուանակոչութիւններով՝ զոր երբեմն ունեցած էին¹⁶⁵:

Շատ բազմալի էր որ՝ գոնէ այն անրա-ւական չափով որով կրցանք նոյնն ընել լե-զոններու համար, կարելի ըլլար հոս ալ նշանակել այս գորագնդերէն անոնք, որ՝ այլեւայլ շրջաններու մէջ՝ կը վերաբերէին կայուն բանակագորքի, եւ միւսները՝ որ միայն բացառարար կը կոչուէին պատերազ-մական ծառայութեան¹⁶⁶: Բայց ասիկայ ան-կարելի ձեռնարկ մըն է: Այս խնդրոյ ու-սումնասիրութեան համար բոլորովին անօ-գուտ են մատենագրական աղբիւրները, գրեթէ մէկ բացառութեամբ¹⁶⁷: Հեղինակ-

¹⁶⁴ Եւ կ'երեւայ թէ ամէնքն ալ միեւնոյն ժամա-նակին կը վերաբերին. Տմտ. CIG, 1253 (Սպարտա)՝ Νεοκλιη: νέος, δημόσιος, ἐοικ(ο)ται(ν)υμένιος δις γαῖα Περσ(ω)ν. (Նիկիոսի կ'երեւան Կրիտասարդ, դեմոսական, Կր-կիցս գինուորեալ ընդդէմ Պարսից): Չեմ կարծեմ, թէ Լ. Վերոսի պատերազմն ըլլայ բնագրիս մէջ սկ-նարկուածը, այլ մասնաւոր Կարակալայիցի եւ յետոյ Աղեքսանդր Սեւերոսի, յաւել՝ 1495. Lebas-Fou-cart, II, 183 b. Մեկապրիցի մէկ արձանագրութիւնը, որ ծանօթ է միայն Whelerի յոսի մէկ օրինակու-թեան, ապահով ունի հետեւեալ՝ τὸ ἐπιγροῦμα τῶν ἐν τῷ Περσικῷ πολέμῳ ἀποθανόντων ... (Վերտա-սութիւն Պարսկական Պատերազմի մէջ մեռնողնե-րուն...) CIG, 1051:

¹⁶⁵ Սակայն անտարակոյս կը զարբին ընդհանուր Սատարք անուան տակ պարտերուէն, որովհետեւ այս բացատրութիւնս այնուհետեւ կը նշանակէ նոր կազ-մութիւններն՝ որ միայն հետեւեցնելը կը մտնէին, ոմանք կայանաւորուած Գանուրի կողմը (Տեղեկ. Աստ., Արեւմ. XXXII, 39—43. XXXIII, 46—50). ուրիշ-ները՝ պաղատական պահեստի մէջ (auxilia palatina) տես վարք:

¹⁶⁶ Ապահով տեղեկութիւն մը Յովսեփոսի քով (Պ. Հ., Բ., 500), բայց միահամուռ կերպով եւ միայն կողմնակալ գործողութեան մը վերաբերմամբ. «Տիտոս տաւ, կ'ըսէ, իրեն հետ վեց վաշտեր եւ չորս թեւեր, եւ գարձեալ դաշնակցաց օգնականները» (Տայ ընդդէմը՝ էջ 194 սյուսէս է՝ «Եւ այլոցն ԲՈՒ ընտրէր հետեւալ, եւ չորս թեւս հեծելաց, եւս եւ զօգնակա-նութիւնս թալաւորաց»):

¹⁶⁷ Ակնարկել կ'ուզեմ Առիանու «Ճակատամար-տութեան ընդդէմ Արմանց» երկը, զոր մանրամասն լուսարանեց E. Ritterling, Zur Erklärung von Arrians Ἐκταεῖς κατ' Ἀλκῶν (ի Wiener Studien, XXIV, 1902, p. 359—372):

ները գրեթէ չեն յիշեր թեւերն ու վաշ-տերը¹⁶⁸, նախ՝ կարծեմ անոնց թուական տկարութեան պատճառաւ, եւ երկրորդ՝ հաւանորէն որովհետեւ շատ մեծարգի չէին նկատուիր: Նոյն իսկ գաւառական հեղինակ-ները կը ջանան Հոռոմայեցոց արտայայտու-թեանց նմանիլ. իսկ արդ այս մանրամասն գորարածիւնները գրեթէ ամբողջովին չէին պարունակեր հոսմէացի քաղաքացիներ:

Սակայն երբեմն երբեմն պատմագիրները կը յիշատակին մարտի մը մէջ Փոլեպացոց, Դակիացոց, Գաղղիացոց եւս կատարած քաջագործութիւնները: Արդ երբ այս ազգաց անունները կը գտնենք իրր յորջորջանք թեւի մը կամ վաշտի մը, պէ՞տք է հետեւեցնել թէ այս թեւը կամ վաշտը ներկայ էր ճա-կատամարտին¹⁶⁹: Այսպիսի կորակացութիւն մը անխոհեմական ըլլալ կը կարծենք: Այս Սատարաց որեւէ մէկ բաժինը կ'անուանա-կոչուէր ազգագրական այն խաւին համեմատ՝ որուն կը վերաբերէին այն գնդին կազմուե-լու ատեն անոր մէջ մտած գինուորները: Սակայն իւր սկզբնական տեղը չի մնար. յա-ճախ տեղէ տեղ կը ճամբորդէ¹⁶⁹. Իւր կար-գերուն մէջ բացուած պարապները կը լե-ցուէին այն նորակոչներով՝ որոնք կ'առ-նուէին նոր կայաններու տեղերէն, ուստի ուրիշ ցեղերէ¹⁷⁰. Եւ անունն իսկ միայն յա-րաբերական արժէք մը կը պահէ, որ կրնայ բոլորովին խորհրդաւոր իսկ դարձած ըլ-լալ¹⁷¹: Հետեւաբար խնդրոյ նիւթ եղող ընդգրկներուն մեկնութիւնը շատ վտանգա-լից է: Ասկէ շատ լաւ կը հասկըցուի թէ

¹⁶⁸ Պրոտարքոս շատ անգամ կը յիշատակէ Ղու-կուզոսի վաշտերը (Պրոտարք., Ղուկ. 27, 31). կ'ակնարկէ այն հետեւակազորն՝ որ «թէ՛ թեթեւակն էր եւ թէ՛ ծանր սպառակն»՝ զոր նոյն պետն իւր Սեքստիլիոս նուիրակին տուաւ: Թեթեւակնը շատ ըզգմաթիւ եղած չ'երեւար. իսկ յիշուած վաշտերուն մասին՝ յայտնի չէ թէ Սատարաց գնդեր են եթէ լե-զոնի բաժիններ:

¹⁶⁹ Մարքարտ (Marquardt, Oganis milit., զգ. Թրգմ. էջ 197, ծն. 7) չափաանցուցած է Սա-տարաց այս շրջուն նկարագիրը. ասոր հակառակ մեր յիշատակարանները՝ որ այսօր շատ աւելի բազմաթիւ են, չափաւոր հաստատականութիւն մը կը ցուցնեն: Օրինակի համար՝ 139 եւ 157 տարիներու վկայագրեր հաստատելով այն կարծիքը թէ Լուլիանոսի գրաւա-բութիւններ (CIL, III, 600) Տրայանոս Պարթեական պատերազմին մէջ ծառայած են, կը ցուցնեն միան-գամայն թէ այս գնդերուն բաւական մաս մը հոս մնաց այնուհետեւ, ոմանք մինչեւ իսկ «Տեղեկ. Աստիճ.» դրոց ժամանակը: Բայց ի վերջոյ ընդհանուր կանոն մը չկար:

¹⁷⁰ Մարկարտ (անդ, ծն. 8) ինքնին կը յիշէ ասոր հակառակոյ բազմաթիւ դէպքեր:
¹⁷¹ Հմտ. Մոմսէն, ի «Hermes», XIX, 1884, էջ 210 եւն:

ինչու այլևայլ թվեր ու վաշտերը՝ փոխանակ ժողովրդեան մ'անուան՝ առած են յորջորջանք մը, որ կը յիշեցընէ նահանգին կուսակալը, որմէ նախ կազմակերպուած էին:

Այս անգամ գլխաւորաբար արձանագրութիւնքն են՝ որ մեծապէս կը նպաստեն, որովհետեւ կարելի է օգտուիլ այլևայլ երկիրներու արձանագրութիւններէն. այսպէս՝ երբ Սատարաց քնդի մը Սկիւթական վերադիրը կու տան: Բայ աստի մոլորելու կարելիութիւնը, որ լեզէոններու նկատմամբ մեծ էր, հոս գրեթէ կ'անհետանայ: Շատ րնական է որ լեզէոն մը՝ որ պատերազմիկ մեծ միութիւն մըն էր, բազմաթիւ դրօշաւորութիւններ (uexillationes) կամ ջոկատներ հատուածէր. բայց աւելի գծուար էր հասկընալ թէ բազմաթիւ բաժիններ անջատուէին վաշտէ մը՝ որ 500էն 1000 հոգի էր լիակատար զօրաթիւ ունեցած ատեն: Անտարակոյս ամբողջ հետեւակաջողը (battailon) կամ հեծելախումբը (escadron) կը հետեւէր կանոնաւորաբար անբաժան իւր վեքսիլացուին (praefectus)¹⁷²:

Վերջապէս մեծապէս կը շահինք «Տեղակ. Աստիճ.» գրքէն: Ասի թերեւս աւելի գաղափարական կազմակերպութիւն մը ցուցընէ քան թէ իրաց իրական վիճակը, եւ 425ին ծրագրեալ զօրադասերը կրնային շատ մեծ պարագաներ ունենալ¹⁷³: Մենք խնդիրը կը վերացընենք այն ենթադրութենէն, զոր անկարելի է գործնականին մէջ հաշուի առնել, եւ կը ներկայացնենք վաշտաց (cohortae) եւ թեւոց (alae) կրկին ցուցակ մը, որոնց մասին վկայութիւն կը տրուի որեւիցէ ժամանակ մը եւ որեւէ կէտի մը վրայ աշխարհագրական այն սահմանին մէջ՝ որ հոս մեր նիւթին կը հայրի, հետեւելով այբուբենական կարգին եւ առանց զանազանելու բաժնելու նահանգներու մէջ:

Միայն «Տեղակ. Աստիճ.» կը ներէր լիակատար աշխարհագրական խմբում մ'ընելու. բայց արդ անպատահութիւն մը չկայ՝ զասի

¹⁷² Սակայն քրքր զարտուղութիւն նշանակելու է հրամատարութիւնը «կարգեալ ի Միջագետս ի դրօշաւորութեանց հեծելոց ընտիր թեւոց»... (praepositus in Mesopotamia vexillationibus equitum electorum alarum...), տես CIL, III, 600):

¹⁷³ Արդեամբք ալ, եթէ ընդունելու ենք իւրաքանչիւր պէտքէն թուերու (numeri) համար Մոմենտի ստանդարտ զօրաքանակները, այն ատեն ամենագոյնի դուքսը (dux) իւր հրամանաց ներքեւ ունենալու էր գոնէ հնգհազար հազար հոգի, որ սակայն լուրջ միաբաներ զինուորաց այն նուագութեան հետ, որու մասին յստիս կը վկայուի:

զանց ընելու, որովհետեւ իւր տուած ցանկերը միշտ օգտալից կը մնան: Յիշեալ ոճէն հրաժարելու համար կը բաւէր մտածել Սատարաց մեծ թիւ մը, որոնցմէ առնուեցան Լուիանոսի դրօշաւորութիւնները եւ որոնց մասին գիտենք միայն ընդհանրապէս թէ Արեւելի մէջ էին Տրայանու իշխանութեան ատեն: Այլուստ ասի աւելի ճշգրէ կ'ըլլար քան թէ պարզ ըսելը՝ Առաջին դարուն այս կամ այն վաշտը կը բանակէր կամ կը գործէր Աստիճի մէջ, երբ որ չենք կրնար բուն գործնիստ կայանն որոշել: Այն ատեն Աստիճի շատ ընդարձակ էր. եւ Արեւելքի նահանգներն այն կարգէն են՝ գործնք «Իրիկլետեան բարեփոխութիւնն» ամէնէն աւելի ստորաբաժանել ստիպուեցաւ. մինչդեռ օրինակի համար Ափրիկէ ասոր շատ քիչ ենթարկուեցաւ:

Իմ հետեւած կարգս այն է՝ զոր C. Cichorius ընդունած է իւր կրկին անուանուցանելուն համար, զորոնք կազմած է մեծ հմտութեամբ ու խղճմտութեամբ եւ որ կը պարկակէ հոռոմէական ամբողջ աշխարհը¹⁷⁴: Իրեն շատ պարտական եմ. բայց հարկ էր որ լրացընէի իւր գործը այն յիշատակարանաց օգնութեամբ, որոնք անկէ ետքը հրապարակ ելած են: Աւելի յօժարակամ ալ պիտի ըլլայի զինքը դարձուելու այն մասին որ տեղ տուած չէ «Տեղակ. Աստիճ.» տուած տեղեկութեանց՝ երբ կը յիշէ Սատարներ, որոնք արգէն ծանօթ են հնագոյն շրջանի մը վկայութիւններէն: Այսպիսի զանազանութիւն մ'արդարացի չէ, որովհետեւ այս յիշատակարանը շատ դիպաց մէջ կը հաստատէ նախընթաց վարչութեան տեւականութիւնը, ուստի պատշաճ է որ օգտուինք անկէ առանց սահմանափակութեանց: Իրմէ վերջն է միայն որ մեծ խրամատութիւնը երեւան կու գայ: Իրմէ վերջն աներեւոյթ կ'ըլլան ամէն հետք վաշտաց եւ թեւոց այնպէս՝ ինչպէս հիմնած էր զասոնք Հասարակապետութիւնը, եւ որոնց նկարագրի դիմագծութիւնը՝ գրեթէ հինգ դարերու տեւողութեան մէջ՝ հազու թէ փոփոխութիւն մը կրած էր: Այս ցանկին մէջ կը գնենք նոյն իսկ Պաղեստինի ու Արարիոյ Սատարները¹⁷⁵, որովհետեւ ասոնք ալ ըստ

¹⁷⁴ Պալլ-Վ. ի րանին Ala (1893) եւ Cohors (1899): Կը զարմանամ որ Ա. Յաւելուածոյ Հատորը (I Supplementband, 1903) ասոնց վրայ բան մ'աւելցուցած չէ:

¹⁷⁵ Թէպէտ եւ հրաժարած ենք երկու աշխարհները տեղագրորէն ուսումնասիրելէ:

զիտան պարագայից կը կոչուէին Պարթեւաց կամ Պարսից դէմ մղուած պատերազմական գործողութեանց աջակցելու:

Թեւ Բ նոր եգիպտացուց Ala II nova Aegyptiorum), ի կարթա Միջագետաց. — Not.¹⁷⁷ XXXVI, 32.

Թեւ Բ Փղաւեան Ագրիպինեան (Ala II Flavia Agrippina), Ա. դարուն՝ Հռենոսի վրայ. CIL, XIII, 6235. Լուիանոս¹⁷⁸ ասկէ ջոկատ մ'ընդունեցաւ. Բ. դարուն՝ Աստիճի մէջ. — Վատգրիքսէն, 2121:

Թեւ Ա Ալամանոց (Ala I Alamannorum), ի նէլա Փիւնիկաստանի. — Not., XXXII, 36.

Թեւ Ալակտեան (Ala Alactica)? Տես Թեւ Բ Գաղղիացուց:

Թեւ Բ Ուլպեան Աւրիանեան (Ala II Vlpia Auriana), Կապադոկիոյ մէջ՝ Ա. դարուն, ի Ռասիւուս. — CIL, III, 6743. Առիւն¹⁷⁹, 1. Իսկ տակաւին է. դարուն՝ Հայաստանի¹⁸⁰ մէջ. — Not. XXXVIII, 22:

Թեւ Ա Բոսպորացուց (Ala I Bosporenorum), Ա. դարուն՝ Աստիճի մէջ, դղեակի մը մէջ՝ որ Եւրոպոսէ երկու ժամ էր. — CIL, III, 6707. Իսկ Բ. դարուն՝ Դակիոյ մէջ:

Թեւ Ա Փղաւեան Աւգուստեան Բրիտանական հազարաւոր երկիցս վասն քաջութեան մանիկալ պակեալ. (Ala I Flavia Augusta Britannica miliaria bis torquata et virtutem), նախ Պանոնիոյ մէջ, գործածուած Տրայանու Պարթեւական Պատերազմին. — Վ.Կ.Գր. XXXIX, յամէ 114 Բ. Ք. հմտ. CIL, III, 6748. Եւրոպոս կը դառնայ Պանոնիա. — Վ.Կ.Գր. LXVIII—LXIX.

[Թեւ Կեսարացուց, Ala Caesariensium, կասկածելի. Յովսեպոս, Չ. Չ., ԺԹ, 365 խօսքին մէջ (τῶν ἰλιγ δὲ <τῶν Καίσαρῶν καὶ> τῶν Δεβλαδτιγῶν, «գթիւ Կեսարացուց եւ Աւրաստացուց») չակերտեալ երեք բառերն ընդմի-

¹⁷⁶ Այլուրեւնական կարգին համար նախ մտադրութիւն եղած է ազգաց անուանակոչութեանց ըստ նոր ուղղագրութեանց. իսկ ուր ազգի անուն չկայ՝ հինն ատուած է այն յորջորջանքն որ աւելի յարմարայն էր զանազանելու ուրիշներէն: — [Մենք հետեւած ենք պարագայէս հեղինակին գրած կարգին. եւ սրղէն այլ կերպ ալ պատշաճ չէր: Լատինական յորջորջանք համար՝ զոր պէտք էինք գնել: Ծ. Թ.]

¹⁷⁷ Այս ամէն կողմանց մէջ Տեղեկութեանց Արեւելեան թափերը, տեղերը յատու կը բերուին (Not. Orientis):

¹⁷⁸ Այս անունն ալ պիտի չըրկենք՝ բայց միայն վերջ յիշուած արձանագրութեան աստի:

¹⁷⁹ Այս կոչումն ամէն տեղ կը ցուցընէ Արիանու «ճակատամարտութիւն ընդդէմ Ալանաց» երկը:

¹⁸⁰ Կը յիշեցընենք որ Հայաստան բռնելով այն ատեն կը հասկցուէր Հոռոմէական վերին Պետութեան ժամանակ Կապադոկիոյ արեւելեան թափերը:

Ջարկուած կ'երեւան. (հմտ. Պ. Չ. Ք. 236). *μὲν ἰλιγ ἰππέων καὶ οὐκ ἔτι τῶν Στρατογῶν, հայ թրքմ. 131 «առաւել քաջամարդիկք էին Սերաստացուց Գ.Ռ. ոգիք.» կամ թէ կը նշանակէր պարզապէս այն սկզբնատեղն՝ ուսկից զինուորակալ եղան Թեւոյ Սերաստացուց մէջ մասը]:*

Թեւ Ժէ Փղաւեան Կորդուած (Կորդուաց, Ala XV Flavia Corduenorum), ի Կայնի Միջագետաց. — Not. XXXVI, 34.

Թեւ նոր Ամուր հազարաւոր գրախալտ (Ala nova Firma miliaria catafractaria զոր Աղեքսանդրոս Սեւերոս արեւելեան գնդերէն կազմեց 234ին. կը կոչուէր Արեւելից մէջ. Փիլիքոսոսներու օրով՝ հաստատուած Արարիոյ մէջ. — CIL, III, 99:

Թեւ Կլաւդեան նոր. (Ala Claudia nova), Կապադոկիոյ մէջ. — CIL, III, 13635.

Թեւ Ա Աւգուստեան Երկուորեակ Կորդուացուց (Ala I Augusta Gemina Colonorum), մասնակցեցաւ Աղբիւնու պատերազմին ընդդէմ Հրէից. — CIL, VIII, 8934. այս միջոցներուն՝ Կապադոկիոյ մէջ, Առիւն՝ 1. Եւրոպոս ի Բիակա (Chiaca) Հայաստանի. — Not. XXXVIII, 21: Հմտ. արձանագրութիւն մը Սաւրայի (Աստրոնոյ) *στρατοπεδαί-χρησται ἰππέων Κολωνεΐτων* (զօրավարի հեծելոց Կորդուացուց. Dittenberger, Or. Gr. IS, 425 = IGRPP, III, 1144).

Թեւ Կոստանդիանեան (Ala Constantiana) ի Տարսուս Պաղեստինի. — Not. XXXIV, 34.

Թեւ Բ Կոստանդիանեան (Ala II Constantiana) ի Լիբոնա Արարիոյ. — Not. XXXVII, 27.

Թեւ Ուլպեան Դակաց (Ala Vlpia Dacorum) Կապադոկիոյ մէջ՝ Բ. դարուն. — Առիւն, 8. հմտ. CIL, VI, 1333. Եւրոպոս ի Սուրիս Հայաստանի. — Not. XXXVIII, 23.

Թեւ Ա Գամասկեան (Ala I Damascena) ի Լեան Յովեայ (Արամազդայ Monte Jouis) Փիւնիկէի. — Not. XXXII, 33.

Թեւ Ա նոր Դիոկլետեան, ի մէջ Թաննուրի եւ Հորոբայ (Ala I nova Diocletiana, inter Thannurin et Horobam) յԱռհայաստանի. — Not. XXXV, 31.

Թեւ նոր Դիոկլետեան ի Վերիարակա Փիւնիկէի: — Not. XXXII, 34.

Թեւ Անտանեան (= Անտոնինեան) Արուայկաց (տանիկ ուղտուց) (Ala Antana [= Antoniniana?] Dromedariorum) յԱրամա Պաղեստինի. — Not. XXXIV, 33.

Թեև վաղերեման Արուսյակաց հագարա-
ուր (Ala Valeria Dromedariorum miliaria)
Ասորիքի մէջ 157ին. — Վկյգ. CX. յաւել՝
CIL, III, 93 եւ 123 = 14160. Ե. դարուն՝ Թե-
րայիսի մէջ. — Not. XXXI, 57.

Թեև Ա. Փրանկաց (Ala I Francorum) Ի
Կուննա Փրանկիէի. — Not. XXXI, 35.

Թեև Ը Փղաւեան Փրանկաց (Ala VIII
Flavia Francorum) Ի Հոնիալիս Միջագե-
տաց. — Not. XXXVI, 33.

Թեև Գեթուլացուց հիօրեայ (Ala Getu-
lorum veterana). 86ին Ի Հրէաստան. —
Վկյգ. XIX. Կուսած ըլլալու է վեսպասե-
նու օրով Հրէից դէմ: — CIL, V, 7007.

Թեև Ա. Փղաւեան Գեթուլացուց (Ala I
Flavia Gaetulorum) նախնարար Դանուբի վեր.
Արեւելքի մէջ թերեւս Գորգիանու առեւ,
բայց ասի դեռ սպառնով չէ. — Arch. epigr.
Mitth. aus Ost.-Ung. VIII (1884) p. 22, Nr. 61
(=IGRRP, I, 263).

Թեև Բ Գաղղիացուց (Ala II Gallorum).
ասի է հաւանօրէն այն ἰλιγγίη ἢ ἰλιγγίαι
(=Iliγγίη րատ յաջող սրբազրութեան Ռիս-
տերիկի) Ասիանու, 9 (տես վերը „Alac-
tca“). Ելիանա (Aeliana) Հայաստանի. —
Not. XXXVIII, 24. անտարակոյս տարբեր
յաջօրգէն՝

Թեև Անտ(ոնինեան) Գաղղիացուց (Ala
Ant[oniniana?] Gallorum), յԱսորական Պա-
ղեստին, յամին 139. — Վկյգ. CIX.

Թեև Գաղղիացուց եւ Թրակացուց (Ala
Gallorum et Thracum) նոյն:

Թեև Հերակլեան (Ala [H]erculiana)
յԱսորական Պաղեստին, յամին 139. — Վկյգ.
CIX. հմմտ. M. Sobernheim, Palmyrene-
nische Inschriften, p. 10, Nr. 2. (Mitth. der Vor-
derasiat. Gesellsch. 1905, 2 = X. Jahrg.) ἐπι-
ζ[ο]ν εἰς ἰλιγγίαι: Παλαιά: [ἢ: μελί:] αἰέας (յամէ
167/8. Հաւանօրէն շփոթելու չէ յաջօրգիս
հետ՝

Թեև Ա. նոր Հերակլեան (Ala I nova Her-
culia) յԱմմուզա Ասորիքի. — Not. XXXIII, 30.

Թեև Զ Սպանիացուց (Ala VI Hispanorum)
Ի Գոմոնա Արարիոյ. — Not. XXXVII, 26.

Թեև Ա. Յովիայ Փելիքս (Երջանիկն Արա-
մազիայ) (Ala I Jovia Felix) Ի Քազանենիկա
(Chaszanenika) Հայաստանի. — Not. XXXVIII,
31. (= «Խաչեա՞նք»):

Թեև Ա. Յալթուսացուց (Ala I Juthun-
gorum) Ի Սալուսարթա Ասորիքի. — Not.
XXXIII, 31.

Թեև Հագարաուր (Ala miliaria). Պղինիոս
Կրտսեր (թղ. է, 31) որ Դոմիտիանու առեղ
Ասորիքի մէջ զինուորական արիւրուն էր,
բարեկամ ունէր զԿղազիոս Պոլլիոն (Cl.
Pollio) որ «առաջնորդէր Թեւոյն Հագարա-
ուրի» (praerat alae miliariae) ասի թերեւ
ըլլայ Թեև Ա. Հագարաուրն (Ala I mil.) Ի
Հաստայ Պաղեստինի. — Not. XXXIV, 36.
աւելի յաջօրգներէս մէկը՝

Թեև Բ Հագարաուր (Ala II miliariensis)
Ի Նաարաֆարի Արարիոյ. — Not. XXXVII, 28.

Թեև Ժ Հագարաուր (Ala X miliaria)
յԱւաթա Արարիոյ — Not. XXXVII, 25.

Թեև Պաննոնիացուց (Ala Pannoniorum)
Տակիտոս (Տար. ԺԵ, 10) Կորբուզոնի բա-
նակին մէջ կը յիշէ alares Pannonios robur
equitatus (թրգմ. Հիւրմիւլ. էջ 434 «Եւ զՊան-
նոնիացիս՝ որ Ի թեւս բանակին զօրավիզն
էին հեծելոց». բառացի՝ «թեւք Պաննոնի-
ացուց՝ զօրավիզն սյրուծիոյն»). հաւանօ-
րէն Պաննոնիական քեւերէն մին՝ որ առժա-
մանակեայ խաւրուած էր Արեւելք Միւսեայէ:

Թեև Բ Պափղագոնացուց (Ala II Paphla-
gonum) Ի Թիւրքիկա Ուոհայաստանի. —
Not. XXXV, 29

Թեև Ա. Պարթեաց (Ala I Parthorum)
Ի Հոնսայա Ուոհայաստանի. — Not. XXXV,
30. չի տեսնուիր թէ արդեօք ասի հին քեւ
Ա. Աւգուստեան Պարթեաց (Ala I Augusta
Partorum) զո՞ւնդն է Ի Մաւրիտանիա, եթէ
Թեև Պարթեաց հիօրեայ (Ala Parthorum
veterana) գունդն Ի Գաղմատեայ՝ «Տեղեկ.
Աստիճ.» զրքէն յառաջ (CIL, III, 8746).

Թեև Ա. Փիւնիկեանց (Ala I Phoenicum)
Ի Հոննէ փիւնիկէի. — Not. XXXII, 38.

Թեև Փոնիւզացուց (Ala Phrygum) յԱսո-
րիս՝ Ա. դարուն. — CIL, II 4251. նոյն է
հաւանօրէն յաջօրգս՝

Թեև Է Փոնիւզացուց (Ala VII Phrygum)
յԱսորական Պաղեստին յամին 139. — Վկյգ.
CIX. հմմտ. թերեւս «Թեւ Եօրնեարդ (Ala
septu[m]a) Կայֆայի մէկ արձանագրութեան
մէջ. — Germer-Durand, Échos d'Orient,
VIII, 1905, p. 12.

Թեև Ա. Պրետորական Հոմիլացի քաղա-
ցուց (Ala I Praetoria civium Romanorum)
Արեւելքի մէջ Լուիանոսի ժամանակ. հմմտ.
αἱ τῶν Ἱταίων ἑπταετίας (հեծեալք Իտալաց-
ուց) թեւապետի մը (ἰσχυρ.) հրամանի
ներքեւ, Անեան 9. համեմատելու է ասոր Թեւ
Ա. Պրետորական այժմ(°) հաստատեալ (Ala

I Praetoria nuper[?] constituta) Հայաստանի
մէջ. — Not. XXXVIII, 26. հոս nuper «այժմ»
խանգարուած մըն է տեղւոյ մ'անունէն:

Թեև Ռիզաուց (Ala Rizena) յԱլազալէ-
արիկա Պոնտոսի. — Not. XXXVIII, 17.

Թեև Ա. Փրիլարա Երկուսասնիցս հաս-
տատեալ (Ala I Salutaria, Duodecimo consti-
tuta) յՈւոհայաստան. — Not. XXXV, 34.

Թեև Բ Փրիլարեան (Ala II Salutis) յԱրե-
փա Փիւնիկէի. — Not. XXXII, 39.

Թեև Ա. Սաքսոնացուց (Ala I Saxonum)
Ի Վերոնիարուլա Փիւնիկէի. — Not. XXXII, 37.

Թեև Սեբաստացուց (Ala Sebastenorum)
Կազմուած Սամարիացիներէն Ի Կեսարիա.
44ին Հրէաստանի մէջ (Յովսեփ., Հ. Հ.
ԺԹ, 365) եւ 51ին (անդ, Ի, 122. Պ. Հ.
Բ, 236). Վեսպասիանոս ետ խաւրեց զասի
հաւանօրէն փոխանակելով թեւիս հետ՝ Թեւ
Ա. Թրակացուց Մաւրիտանեան (Ի Մաւ-
րիտանիա, Ala I Thracum Mauretana): Ուստի
իւր լիակատար անունները պիտի ըլլան «Թեւ
Երկուորեակ Սեբաստացուց» (Ala Gemina
Sebastenorum, տես CIL, VIII, 9358—9359)

Կամ(°) «Թեւ Ա. Փղաւեան Սեբաստացուց» (Ala
I Flavia Sebastenorum, անդ, 17.900). ան-
տարակոյս նոյնն է հագարաուր (miliaria) յոր-
ջօրջուածն ալ՝ որ Ե. դարուն էր յԱստուտա
Պաղեստինի. — Not. XXXIV, 32.

Թեև Ընտրելագոյն (Ala Singularium) Լո-
ւիանոսի արձանագրութեան մէջ թերեւս նոյն
«Թեւ Ա. Ուլփեան Ընտրելագոյն (Ala I Vlpia
Singularium, տես CIL, X, 6426) որ 157ին
Ասորիք էր. — Վկյգ. CX. հմմտ. «Թեւ
Ա. Ընտրելագոյն (Ala I Sing[ularium] — CIL.
III, 11995. յաւել՝ էջ 2328⁵³ teg. Գարձեալ
այս Ընտրելագոյնի (Singulares) կրնան ըլլալ
Առեանու յիշած «Հեծեալք քնարիք» (επταετίας
ἐπίεστος), Առեան, 4:

Թեւ (Աւգուստեան) Ասորի(°) (Ala [Augusta]
Syriaca?) տարակուսական. — Լուիանոսի
արձանագրութեան մէջ:

Թեւ Թեոդոսեան առ Աւաքսա (Ala Theo-
dosiana apud Avaxam) Ի Պոնտոս. — Not.
XXXVIII, 18.

Թեւ Փելիքս (Երջանիկ) Թեոդոսեան (Ala
Felix Theodosiana). Երկու հատ այս անու-
ամբ. մէկը՝ Շահապացի (Siluanis, շահապեա
անտառաց), Ի Պոնտոս. — Not. XXXVIII, 19.
միւսը՝ Կարասի (Pithiae, «Տակաո» առեղ)
Հայաստանի մէջ. — անդ. 32. Ասի չէ՞ ար-
դեօք աւելորդ կրկնութիւն մը «Տեղեկ. Աս-

տիճ» զրոց, որուն խմբագիրը զօրժա-
ծելով մերձաւոր թուականաւ՝ բայց իրարմէ
տարբեր յիշատակարաններ, միտ դրած ըլլայ
միեւնոյն թեւին մէկ կայանէն ուրիշ կայան մը
փոխադրուած ըլլալուն: Հոս միեւնոյն նա-
հանգին վրայ է խնդիրը (որ ճիշդ չէ սա-
կայն Թեւ Բ Փելիքս վաղեմիկեան գնդերու
համար):

Թեւ Թրակացուց Հերակլեան (Ala Thra-
cum Herculania), Լուիանոսի արձանագրու-
թեան մէջ. յաւել՝ CIL, XII, 1357. յետոյ
Եղիպտոսի մէջ:

Թեւ Թրակացուց Մաւրիտանեան (Ala
Thracum Mauretana) որ փոխանակուեցաւ
Թեւ Ա. Սեբաստացուց գնդին հետ (տես
վերը): — Վկյգ. XIX յամէ 88. յետոյ Եղիպ-
տոսի մէջ — Berlin, Griech. Urk. II, 26, 2.

Թեւ Գ Թրակացուց (յԱսորիս Ala III
Thracum in Syria). Փղաւեանց ժամանակի
արձանագրութեան մը մէջ. — CIL, II, 4251.

Թեւ Ա. Վաղեմիկեան (Ala I Valentiana)
Ի Թայնատա Արարիոյ: — Not. XXXVII, 29.

Թեւ Բ Փելիքս վաղեմիկեան (Ala II.
Felix Valentiana). Երկու հատ այս անուամբ,
մին «առ Բանակա» (apud Praesidium) Ի
Պաղեստին: — Not. XXXIV, 35. միւսը՝ «առ
Ադիտիս» (apud Aditthu) Արարիոյ: — Not.
XXVII, 30.

Թեւ Ա. վաղերեման Ընտրելագոյնից (Ala
I Valeria praelectorum) Ի Թիւրքականա Ուո-
հայաստանի: — Not. XXXV, 27.

Թեւ Ա. Յալթուսեան Տովեայ (Յովեա՞յ)
ընդդէմ Բինթայ (Ala I Victoriae Tovia [Ico-
via?]) contra Bintha) յՈւոհայաստան: —
Անդ, 28:

Ստիպուած եմ մէկզդի թողուլ այն երկու
հեծելախմբերը որ անուն չունին եւ չեն նշա-
նակուիր՝ բայց եթէ իրենց զօրանիստ տեղե-
րով այսինքն՝

Թեւ յիդիոտա հաստատեալ (Ala Idiota
constitua) Ի Պաղեստին: — Not. XXXIV, 37

Թեւ Ի դիկիին Տաբլարացուց հաստա-
տեալ (Ala castello Tablariensi constituta) Ի
Հայաստան: — Not. XXXVIII, 25.

Վալտ. Բ Եղիպտացուց (Cohors II Aegyp-
tiorum), Ի Զորին Դիոկլետիանու (Valle
Diocletiana) Փիւնիկէի: — Not. XXXII, 43.

Վալտ. Ե Պակատեան Ալամանաց (Cohors
V Pacata Alamannorum) Ի յՈւոհայաստան
Փիւնիկէի: — Անդ, 44:

Վաշտ Բ Գրատիանեան (Cohors II Gratiana) Ի Յեհիրոյ Պաղեստինի: — Not. XXXIV, 42.

Վաշտ Համիայուց (Cohors Hamiorum) — տես Վաշտ Հագարաւոր (Cohors miliaria).

Վաշտ Գ Հերակլիան (Cohors III Heraculia) Ի Վերանոկա Փրենիկէի: — Not. XXXII, 40.

Վաշտ Բ Սպանիացուց (Cohors II Hispanorum) Ի Կապադովկիա: — CIL, III, 6760; IX, 2649.

Վաշտ Ա Իտալական (Առիանոս, 13) կամաւորաց քաղաքացեաց Հոմայեցուց Ի Գամիլիա (Cohors I Italica voluntariorum civium Romanorum in Cappadocia). — CIL, VI, 3654.

Վաշտ Բ Իտալական քաղաքացեաց Հոմայեցուց կամաւորաց Հագարաւոր (Cohors II Italica civium Romanorum voluntariorum miliaria). CIL, III, 13483a. XI, 6117. ասորական վկայագիրը՝ CX, 157 տարւոյ չ'անուաներ զասի «Հագարաւոր»:

Վաշտ (Գ կամ աւելի) Իտուրէացուց (Աղեղնաւոր) (Cohors III...] Ituraeorum sagittaria). Հմմտ. Ռիտտէրլինգ, անդ, էջ 367) Կապադովկիոյ մէջ: — Առիանոս, 1, 18:

Վաշտ Ա Յուլիան Ընտիր¹⁸¹ (Cohors I Julia Lectorum) Ի Սպիտակ-Չոր (Valle Alba) Փրենիկէի: — Not. XXXII, 42.

Վաշտ Ա Լեպիդիանեան հեծեալ (Cohors I Lepidiana equitata) Միւսիայէ՝ հաւանորէն արեւելք խաւրուած Տրայանու պատերազմին համար, Ի «Նոր-Քանակ» (Caene-Parembole) Հայաստանի: — Not. XXXVIII, 35. — Տես վերը՝ Վաշտ Ապուլիան:

Վաշտ Ա Լիգուրացուց (Հագարաւոր) (Cohors I Ligurum [miliaria?]), Արեւելքի օրեւէ նահանգի մը մէջ (°): — CIL, III, 435 = 7131.

Վաշտ Բ Ա Եւ Գ Լուկենտեանի հեծեալ (Cohortes I, Lucensium equitatae) Զոկատներ Լոլիանու բանակին մէջ:

Վաշտ Ա Ալգոստեան Պրետորական Լուսիտանացուց հեծեալ (Cohors I Augusta Praetoria Lusitanorum equitata) Հրէաստանի մէջ

¹⁸¹ Այս Lectorum (բուն Բնիքցողաց) բառը թերեւս Singularium (Ընտրելագոյն) իմաստն ունի: — [Այսպէս վերն ալ «Ala I Valeria praelectorum, Քրտացի ... առաջի բնիքցողաց՝ Ռուսոյցաց» բառ հին լատիներէնի հաւանորէն Ընտրելագոյնի ձեւ, ինչպէս զբերք:]

86ին: — Վկայ. XIX, յետոյ՝ Եգիպտոսի մէջ: — Berlin, Griech. Urkund. 696.

Վաշտ Հագարաւոր (Cohors miliaria, առանց ուրիշ յորջորջանաց) Ասորիքի մէջ: — BCH, XXI, 1897, p. 45 Nr. 22: σ-ρ-α-τ. γ-ω-ρ-τ. μ-ι-λ-ι-α-ρ-ί-α-ς.) Իսկ Տրէվիսի արձանագրութեան մը մէջ (CIR h, 787): [co]hortis Rhamae miliariae in Syria. հոս «Հոմա»՝ զոր քանդակիչը սխալ հասկցած է, զօրակոյտն է Համա (Hama): Եւ R տառն աւելցուած է արարական H կոկորդային հնչուած բացատրելու համար: Հիրշֆելդ Եւ Յանզմայստէր (CIL, XIII, 3684) նոյն բնագիրն երկրայութեամբ կը մեկնեն այսպէս՝ ex [co]hort[e] pr(i-ma)] Ha[m(iorum)] miliaria in Syria (յառաջին վաշտէ Համացուց հագարաւորէ յԱսորիս): Այս ամէնը բնագրի քիչ մը չափազանց մեծ վերանորոգում եղած կ'ըլլայ. բայց առջեւնիս ալ՝ սրբագրելու համար՝ միայն թերահատար պատճեններ ունինք արձանագրութեան:

Վաշտ Ա Լեոնականաց (Cohors I Montanorum) յԱսորական Պաղեստին 139ին: — Վկայ. CIX. Թերեւս Պանոնիոյ մէջ եղածը՝ հոս փոխադրուած: — Վկայ. XVII.

Վաշտ Նումիդացուց Աղեղնաւորաց հեծեալ (Cohors Numidarum sagittariorum equitata Առիանոս, 3, 18 = կը գրէ Νόμαδες «Վաչկատունք»): Թերեւս Վաշտ Ա: — Ath. Mitth. IX, 1884, p. 262.

Վաշտ Ա Արիւնիան (Cohors I Orientalis) Ի Թամա Փրենիկէի: — Not. XXXII, 44.

Վաշտ Գ Պաղեստինացուց (Cohors IV Palaestinarum) Ի Թամանա Պաղեստինի: — Not. XXXIV, 46.

Վաշտ Ա Ալգոստեան Պանոնիացուց (Cohors I Augusta Pannon (iorum) յԱսորիս 157ին: — Վկայ. CX.

Վաշտ Բ Եւ Գ Ուլփեանի Պափղագոնիացուց (Cohortes II, III Vlpiae Paphlagonum), նոյնպէս. ասոր Բ (հեծեալ, II equitata) վաշտը՝ Լոլիանու բանակին մէջ:

Վաշտ Ա Ուլփեան Պետրէացուց հեծեալ (Cohors I Vlpia. Petraeorum equitata) ներկայ Լոլիանու բանակին մէջ, Եւ յԱսորիս: 157ին: — Վկայ. CX.

Վաշտ Գ Ուլփեան Հագարաւոր Պետրէացուց (Cohors III, Vlpia miliaria Petraeorum) Ի Մետիտա Հայաստանի: — Not. XXXVIII, 27. հաւանորէն «հեծեալ աղեղնաւոր, equitata

sagittaria, տես Առիանոս, 1 τὸς ἰπποτοξότας τὸς Ἰετροαίου «զհեծեալ ներածիք Պետրացի»):

Վաշտ Դ (Ուլփեան) Պետրէացուց (Cohors IV [Vlpia?] Petraeorum) յԱսորական Պաղեստին, 139ին: — Վկայ. CIX.

Վաշտ Ե Ուլփեան Պետրէացուց (հեծեալ) (Cohors V Vlpia Petraeorum [equitata] օրուն մաս մը ներկայ էր Լոլիանու բանակին մէջ, Եւ յԱսորիս էր 157ին: — Վկայ. CX.

Վաշտ Զ [Ուլփեան] Պետրէացուց (Cohors VI [Vlpia?] Petraeorum) յԱսորական-Պաղեստին 139ին: — Վկայ. CIX.

Վաշտ Դ Փոնիգացուց (Cohors IV Phrygum) Ի Պրեզիդիում (Բանակ, Praesidio) Պաղեստինի մէջ: — Not. XXXIV, 41.

Վաշտ Ա Յիսուաւոր (առանց ուրիշ յորջորջանաց, (Cohors I Quinquagenaria, ըստ Seeck Ի ուղղելի Հարիւրաւոր, Centenaria), Ի Տարբա Պաղեստինի: — Not. XXXIV, 40.

Վաշտ Ա Հնէտացուց հեծեալ (Cohors I Raetorum equitata) Ի Գամիրս: — Առիանոս, 1:

Վաշտ Դ Հնէտացուց հեծեալ (Cohors IV Raetorum equitata), անդ՝ 11, 12. Ա. դարուն՝ յԱնալիրա Հայաստանի: — Not. XXXVIII, 28.

Վաշտ Ա Փրիլարա (Cohors I Salutaria) Երուսաղեմի Եւ Երիզովի մէջտեղ, Ի Պաղեստին: — Not. XXXIV, 48.

Վաշտ Ա Սեբաստացուց Հագարաւոր (Cohors I Sebastenorum miliaria) յԱսորական Պաղեստին, 139ին: — Վկայ. CIX. Մոմսէն ասոր մասին ալ նոյն ենթադրութիւնը կ'ընէ զոր կ'ընէր Ա. Ասկաղոնացուց Եւ Ա. Կանաթացուց վաշտերուն վրայ: Տես նոյները:

Վաշտ Ա Սիլգամբրացուց հեծեալ (Cohors I Sygamb[or]um equitata), ներկայացուած Լոլիանու արձանագրութեան մէջ. հաւանորէն նոյն է Ա. Կալուդեան Սուգամբրացուց (I Cl[au]d[ia] Sugamb[orum]) վաշտը՝ CX վկայագրին օր նոյնը Ասորիքի մէջ կը գնէ 157ին:

Վաշտ Ա Թեոդոսեան (Cohors I Theodosiana) Ի Վաղեստիա Հայաստանի: — Not. XXXVIII, 33.

Վաշտ Ա Ալգոստեան Թրակացուց (Cohors I Augusta Thracum equitata) նախ Ի Պանոնիա, յետոյ Արարիա եկած: — CIL,

III, 109, 110. հաւանորէն վերջնական կերպով, օրովհետեւ Ե. դարուն կայ Վաշտ Ա Թրակացուց (Cohors I Thracum) յԱսորական Արարիոյ: — Not. XXXVII, 32: Դարձեալ՝

Վաշտ Ա Թրակացուց Հագարաւոր (Cohors I Thracum miliaria) նախ յԱսորական Պաղեստին 139ին: — Վկայ. CIX. յետոյ՝ յԱղաթիթա (կամ Աղիթիթա) Արարիոյ: — Not. XXXVIII, 31. Որոշ չէ թէ այս երկուքին միոյն հետ նոյն զննուու ենք յաջորդը՝

Վաշտ Ա Թրակացուց (Ասորական) հեծեալ (Cohors I Thracum [Syriaca] equitata) յաճախ Միւսիայէ Ասորիք փոխադրուած: — Վկայ. XIX, յամէ 86. արձանագրութիւն Լոլիանու՝ CIL, III, 8262 = Wiener Jahreshfte, VIII (1905) Beiblatt, p. 19. (Բ. դարու վերջէն):

Վաշտ Բ Թրակացուց Ասորական (Cohors II Thracum Syriaca, Ի CIL, XIV, 2957) կը ներկայանայ XIX վկայագրին մէջ 86 տարւոյ Եւ CX վկայ. 157 տարւոյ. յետոյ՝ Եգիպտոսի մէջ:

Վաշտ Գ Թրակացուց Ասորական (հեծեալ) (Cohors III Thracum Syriaca [equitata?]) — Cagnat, Ann. epigr. 1896, Nr. 35. Ասորական CX վկայագրին մէջ 157 տարւոյ է Վաշտ Գ Ալգոստեան Թրակեան (Coh. III, Augusta Thracum) Եւ ո'չ «հեծեալ»: Ասորիք եկած ըլլալու է 139ին Գ Թրակացուց վաշտին հետ, ինչպէս եզրակացուցած է H. de Villefosse Ի մեկնութեան արձ. CIL, VIII, 15529. (Հմմտ. L. Poinssot, Ի Nouv. archiv. des miss. XIII, 1906, p. 289).

Վաշտ Դ Թրակացուց Ասորական (Cohors IV Thracum Syriaca — CIL, II, 1970. միայն իւր անունէն կ'ենթադրենք երբեմն Ասորիք բնակած ըլլալը:

Վաշտ Բ Վաղեստիան (Cohors II Valentiana) Ի Զիզանա Հայաստանի: — Not. XXXVIII, 37.

Վաշտ Գ Վաղերեան (Cohors III Valeria) Ի Մարմանտարում Ասորիքի մէջ: — Not. XXXIII, 34.

Վաշտ Ժ Վաղերեան (Cohors II Valeria) յԱֆրոյ (Afro) Պաղեստինի: — Not. XXXIV, 38.

Վաշտ Ա Յալքոնաց (Cohors I Victorum) յԱմմասթա Ասորիքի: — Not. XXXIII, 35.

Վաշտ Ա Վինդիլիկեանց Հագարաւոր (Cohors I Vindellicorum miliaria) յիշատա-

կուսած ի վայրագրին LXVI (157 տարւոյ), որ Տրանսիլուանիոյ գնդերը կը յիշէ յանուանէ. բայց, կ'ըսէ Cichorius, թերեւս նախնարար Պաղեստին էր, որովհետեւ այն տեղ յիշատակուածներուն մէջ կ'երեւայ նաև Կեսարացի Հրեայ մը՝ Bar Simso(n), Callistenis f. n. (Բար Սամսոն՝ որդի Կալիսթենայ):

Վաշտ Ա Ուլփեան Աղեղնաւորաց հեծեալ (Cohors I Vlpia sagittariorum equitata) ներկայացուած Լուիանու բանակին մէջ:

Վաշտ Բ Ուլփեան հեծեալ (Cohors II Vlpia equitata) յԱսորիս 157ին: — Վ.Կ.Կ. CX.

Վաշտ Գ Կամաւոր (Cohors III Voluntaria) ի վալթա Արարիոյ: — Not. XXXVII, 33. հաւանօրէն Դաղմատիայէ փոխադրուած 245էն ետքը: — CIL, III, 2706 = 9724: Թերեւս այս վաշտին անունը անցած է յետոյ Հեաեակայ այն քուռայն (numerus)՝ որուն կը վերաբերին Գաղայի եւ Ելեթերոպոլիսի Մարտիրոսաց ոմանք (է. դարու սկիզբը). որոնց համար կ'ըսուի՝ ἐξ βάνδοσ Βολουγταρίων (ի խմբէ Կամաւորաց): — J Pargoire, Ի Echos d'Orient, VII, 1905, p. 40—43.

Վաշտ ԺԴ Վաղերեան Զաւրէից (Մաւրէից) (Cohors XIV Valeriana Zabdenorum) ի Մէսոպոտիայի Միջագետաց: — Not. XXXVI, 36.

Առանձինն յիշատակելու է այն դունդը՝ որ զուտ ու պարզապէս Վաշտ (Cohors) անունով կը յիշուի ի Մոքորա Հայաստանի: Not. XXXVIII, 38.

Այս Յանկերը յերեւան կը հանեն բազմաթիւ իրողութիւններ՝ գործնք պէտք է մատնանիշ ընել. նախ՝ Տրայիանու փառասէր՝ բայց եւ նախատեսող գործունէութիւնը. այս թեւոյց եւ վաշտից շատերը կը յորջորջուին Ուլփեան (Vlpia) ¹⁸². Բ. դարու երկրորդ կիսուն պատկառելի թուով գորագնդեր նոր ստեղծուած կամ փոխադրուած են զէպ ի արեւելեան սահմանադրութիւնները: Միւսինոյն ժամանակ կը հաւաստենք որ այս գորագնդերը չէին վար լէզններէ, որոնք պարագայից պահանջած ծառայութեան համար նուազ

¹⁸² Շատերը նոյնպէս Փլաւեան (Flavia) կը կոչուին. բայց եթէ զատնք Փլաւեանք ստեղծած են՝ գոնէ ազանօրէն իրենք չեն, որ գաննք Արեւելքի մէջ հաստատուած են, հրեական աստիճան պատերազմին ամբի:

յարմար ճանչցուած էին: Նախադաս համարուած են գորարածիւններ՝ որ աւելի ճիշտ ու աշխոյժ մարտադիրութեամբ մը մարդուած են եւ քիչ մը նման ասպարէզի վրայ ճակատներ մղելու պատրաստուած զէպ ի Եփրատ կամ Տիգրիս: Դիոկղետիանու վերակազմութիւնն աւելի նուազ պահերեւ կը տեսնուի՝ Թեւ Դիոկղետեան, Թեւ 3ովիայ (ala Diocletiana, alae Jovine.) վերջապէս կան երեք Թեւ Թեոդոսեանի (alae Theodosianae) Հայաստանի մէջ ¹⁸³:

Միտ գնելու կէտ մը նոյնպէս որ շատ փոքր թուով սատարք կայանաւորած էին Արարիոյ մէջ՝ «Տեղեկութեան» վկայած վարչութեան յառաջ: Կարծեմ թէ ասի նշան մըն է թէ Ինքնակալը՝ նոյն խակ 105էն ետքը՝ խնամք տարած են օգտուելու Նարատացոց գործակցութեան իրրեւ Դաշնակիցներէ, որով հոսովեական գնդերու խնայութիւն կ'ըլլար: Եւ թերեւս այս մարդկան շատերը կը գնուորագրուէին Ասորական գորագնդերու համար ¹⁸⁴:

Չորսթուերը բուսական ճշգիւ համեմատական եղած կ'երեւան Սախմանաց (limes) այն հատուածին տարածութեան հետ՝ զոր պէտք էին պատասխարել: Միւս կողմանէ այն ամէն գորագնդերը՝ գործնք Առիանոս Կապադովկիոյ մէջ կը յիշէ, Ե. դարուն ամբողջովին կը գտնուին Հայաստանի մէջ. ուստի կ'երեւայ թէ այս տեսակիտով կանոնաւոր կէտ մըն էր ասոնց հաստատակաց տեսականութիւնը, — երեք դարերու տեսականութիւն մը:

Չարմանալու չենք որ Ուսնայաստանի եւ Միջագետաց արձակ երկիրներուն մէջ հետեւակազորքը հազիւ թէ կը ներկայանայ: Աւելի գարմանալի է որ առաջին հայեցումներն ա՛յն է որ վաշտերու թելը՝ ամբողջու-

¹⁸³ Ասի ուղարկու մանրամասնութիւն մըն է՝ զոր մերձեցրնելու ենք Թեոդոսի Ա. ձեռք Հայաստանի խողազական բաժանման համար կամ զաշանց հետ, վաշտերը կը ցուցնեն որ այնու հանդերձ խոհեմօրէն անձնազատ գրուելութիւն կ'ըլլար:

¹⁸⁴ Արդեամբք ալ 139էն յառաջ կային միջնե վեց վաշտի Պետրաեաց (cohortes Petraeorum). բայց նորանշան կէտ մըն է որ այս փորձուած հեծեալները աւելի թեւոյց մէջ չեն մուծած: — Այս վաշտի Պետրաեաց թերեւս կը ներկայացնեն այն «վեց վաշտի Սարակիստաց» (sex coh. Saracenorum) որոնց մասին կը խօսի Պրորոս (4, 1—2) եւ որոնք կասկածելի կը համարի՝ շատ բառացի մեկնութեամբ մը՝ L'écrivain գիտնականը (Études sur l'Histoire Auguste, Paris 1906, p. 58 ff.):

թեան մէջ զգալապէս աւելի է թեւոյց թուէն. սակայն արդէն այս վաշտերէն շատերը — թուով 24 — հեծեալ են (equitatae), անշուշտ նաև ուրիշ քանի մը հասան ալ էին նոյնպէս՝ թէպէտ մեզի անձանօթ մնացած. բայց մանաւանդ այրուծին շուտով աճեցաւ ¹⁸⁵ նոր կազմութիւններով, որոնք Գաղղիկոսէն են ¹⁸⁶, եւ ասոնք են՝ Հեծեալի կամ Այլուսի (equites) ¹⁸⁷:

(Շարունակելի): 2. Յ. ՏԱՇԵԱՆ.

ԵՐԿՈՒ ՀՇՅԵՐԷՆ ԳՐԶԵԳՐ ԸՆԵՏԱՐԱՆ ԶԱՆԼԵՑԻ ՄԵՋ

Լիրանանի Զահլէ փոքր քաղաքին մէջ Հաճընցի Տիար Յարութիւն Յովակիմեանի մօտ տեսայ Հայրերէն երկու ձեռագիր Աւետարան: Չանոնք գնած է Դամասկոսարնակ Ալիպէյի խօժանցէն, որ կը հաւատէ՝ թէ այդ գրքերը Կեսարիայէն բերած ըլլայ. փութացի ցուցակադրել, վասն զի սեպհականատէրը մտադիր էր գանոնք Ամերիկա վաճառել:

1.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ԹՈՒՂԹՔ՝ 300: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 21 X 15: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, 14 X 4.5 (խրաֆանչիւրք): — ՏՈՂՔ՝ 21: — ՆԻԻԹ՝ մագաղաք, ընտիր: — ԹԵՐԹՔ՝

¹⁸⁵ Բոսորայի արձանագրութիւն մը (Վատմիւնա. 1946 = CIL, III, 93) կը յիշէ «Հեծեալի ընտիր բանակին Արաբացոց» (e[qu]ites) sing[ul]ares) exer(citus) Arabici). յայտնապէս այրուսի գիտնորներէ կազմուած գունդ մըն էր՝ քիչ շատ ամէն կողմէ գորհան եղած: Թանկազին բան մը կ'ըլլար արձանագրութեան թուականը գանելը. արձանագրութիւնը գեղեցիկաւստ (bonis litteris) կ'ըսէ CIL, որ մեծ բան մը չի ցուցնէր. եւ արձանագրութեան մէջ յիշուած նուիրակն այլուստ անձանօթ է. բայց նոյն խակ այս տիպոսը գոնէ կը ցուցնէ՝ ամէնէն ուշ՝ Գ. դարու ստանդին կէտը:

¹⁸⁶ Զմամ. Ritterling, Ի Festschrift für O. Hirschfeld, անդ:

¹⁸⁷ Եւ Յուրաֆ (երեքանկիւնի ձախաւք) Հեծեալից (cunei equitum) բառացի «Մեղք հեծեալից», որ Գերմանական ծագմամբ հեծեալաբերու (գերմ. Keil) տիպար մըն էին (Տակիտ., Գերմ. 6—7) եւ որ Արեւելքի մէջ կը ներկայացուի միայն Պաղմուրացոց միակ կամակամ գրոշարարութեամբ մը (vexillatio comitatensis՝ «մարտական ջոկատ»). Not., Or. VII, 34):

24: — ԿԱԶՄ՝ տախտակ վրան կաշի, գծագրողերով. փակմեքենան ինկած: — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՇՊԱՆԱԿ՝ չուրի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ պահուած, առաջին բուրբք քիչ մը պատուած: — ԶԱՐԳԱԳԻՐՔ՝ շատ սիրուն, բազմազան, ոսկեխառն: — ԳԻՐ՝ բոլորագիր, շատ յստակ: — ԽՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔ՝ Աւետարաններու սկզբնատուները գանազան գոյներով, մանաւանդ՝ ոսկեզանգ: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔ՝ շատ, գոյնզգոյն, գեղեցիկ. ստեղծ կարներ առեկայներու եւն, հմմտ. քղ. 15ր, 12ա, 17ա, 18ա, 19ա, 19բ եւն եւն: — ԽՈՐԱՆՔ՝ քղ. 15ա, 94ա, 148ա, 234ա, գոյնզգոյն, ոսկեզարդ. յաջող: — ՆԿԱՐՔ՝ քղ. 14բ, 93բ, 147բ, 233բ (Մատրէոս, Մարկոս, Դուկաս եւ Յովաննէս՝ Պրոխորանի կետ եւ արժիւով) եւ քղ. 4բ—11ա (աղիւսակ, կանոն) ամէնն ալ գոյնզգոյն, ոսկեխառն, յաջող: — ԿԱՍԱՐԿՔ՝ քղ. 1ա, 2ա, 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ—8ա, 9բ, 10ա, 147ա, 232բ, 233ա, 350ա—բ: — ԺԱՄՆԱԿ՝ ՌձԻԹ (= 1680): — ԳՐԻՉ՝ Մկրտում Եղեցի: — ՏԵՂԻ՝ երգիչ: — ՏՆՐ՝ Պետրոս: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ քղ. 295բ—299բ: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ տե՛ս վերը:

Մատենա կ' Աւետարան.

Թղ. 12ա—91ա. Մատթէոս (եւ նախադրութիւնք ու գլուխք):

Թղ. 91բ—144ա. Մարկոս (եւ նախադրութիւնք ու գլուխք):

Թղ. 144բ—231ա. Դուկաս (եւ նախադրութիւնք ու գլուխք):

Թղ. 231բ—295ա. Յովհաննէս (եւ նախադրութիւնք ու գլուխք):

Թղ. 294բ—295ա. Իրք կնոջ շնացելոյ:

Թղ. 295բ—299ա. Գլխաւոր յիշատակազրուիւն.

«Յիշատակարան. Անսկիզբն եւ անկատարածն Աստուած, անեղն եւ անհասանելին... Չոր տեսեալ այսպիսի աղբիւր աստուածարուխ աւետարներ բան սուրբ Աւետարանիս Պետրոսս եւ շարժեալ ի սէր մեծաւ ըղձամբ եւ ջերմեանդ փախազանօք ի խորոց սրտէ մեծաւ յուսով, կատարեալ հաւատով, անապաշաւ սիրով եւ բազում ուրախութեամբ եւ զձագրել եւ ստանալ զսուրբ մատենա հալալ ընչից արդեանց՝ եւ վաստակաց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնողացն իւրոց եւ արխաններձ ազգատոհմին իւրոց: Արդ շնորհիւ Տեան սկսայք եւ ողորմութեամբ նորին կատարեցաք գաստուածարնակ սուրբ Աւետարանս ի թուարութիւնս Հայկազեան սեռիս Ռձ եւ ԻԹ եւ ի Հայրապետութեան Տեան Յակորայ հանգաբախազաց ծովուն հաստահողոյս եւ անառիկ պարսպին Հայոց եւ ի հովուապետութեանն նահանգին Տեան Ագաբիայի Սրբազան